



Ե. Տրագրահան

ԱՂՄՈՒԿ ՎԱՍՆ ՈՇՆՁԻ

1. Սույն թվականի հունվարի խմբագրականով անդրադարձել էինք մեր եկեղեցին կազմական մի կանոնադրությամբ օժտելու հարցին, որոշ տվյալներ և խոհեր ներկայացնելով մեր ընթերցողներին, հույս ունենալով, որ դրանցով բավարար չափով լուսաբանած կլինենք բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են մեզ հարցերով:

Վերջերս արտասահմանից ստանալով որոշ հայ թերթեր, մի անգամ ևս հաստատեցինք, սակայն, թե Մայր Աթոռիս և մեր խմբագրության բոլոր լուսաբանումները ոմանք ոչ ուղիղ կերպով են մեկնաբանում, հատկապես Միացյալ Նահանգներում հրատարակվող «Հայրենիք» կուսակցական օրաթերթը:

Որով, անհրաժեշտ ենք գտնում մի անգամ ևս անդրադառնալ վերոհիշյալ հարցին:

2. Նախ և առաջ անհրաժեշտ է հաստատել, թե առ այսօր գոյություն չունի ոչ մի եկեղեցական կանոնադրության նախագիծ:

Մի կանոնադրության նախագծի նախնական ուրվագիծն է, որ իբրև փորձ խմբագրվել է կանոնադրության Հանձնաժողովի կողմից, որն այս տարի աշնանը հավանաբար պիտի շարունակի իր աշխատանքը և, եթե հանգի որոշ բավարար արդյունքի, այն պիտի ներկայացնի Վեհափառ Հայրապետին և Գերագույն Հոգևոր Խորհրդին ի գիտություն և ի տնօրինում:

Եթե Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհուրդը հարմար գտնեն, այդ փաստաթուղթը, որպես նախնական նախագիծ, հավանաբար առաքվի Հայ Եկեղեցու Ավիրապետական Աթոռներին, թե-

մերին ու եպիսկոպոսներին ի գիտություն և ի քննարկում:

Նվիրապետական Աթոռների գահակալների և թեմերի կարծիքներն ու առաջարկություններն ստանալուց հետո, հավանական է, որ կազմվի վերջնական մի նախագիծ և ներկայացվի Եպիսկոպոսաց ժողովին ու եկեղեցական-ազգային վերին մարմիններին, ի քննարկում, որից հետո այն կներկայացվի Ամենայն Հայոց կաթողիկոսին ի կանոնական հաստատում:

3. Ահա այս կացության մեջ է, որ, երբ դեռևս միայն նախնական մի նախագիծ էր մշակվել, Ամենայն Հայոց կաթողիկոսը անցյալ տարի հրավեր ուղարկեց Տանն Կիլիկիո կաթողիկոսության, որ իր ներկայացուցիչները առաքի, որպեսզի նրանց հետ խորհրդակցաբար Մայր Աթոռում քննարկվի կանոնադրության մի նախագիծ մշակելու հարցը:

Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչները եկան, սակայն ոչ թե խոսքի մատելու և խորհրդակցելու, այլ պարզապես մերժելու կանոնադրություն ունենալու գաղափարը:

4. Հասկանալի կլինեք, եթե Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչները կանոնադրության մասին իրենց Աթոռի առաջադրանքները ներկայացնեին, սակայն, անհասկանալի մնաց, թե ինչո՞ւ նրանք սկզբից ևեթ բացարձակ ժխտական վերաբերմունք ճշտեցին: Մղվում ենք այստեղ մեր համոզումը հայտնել, թե այդ ժխտական դիրքավորման տակ ինչ-որ թաքուն, չխոստովանված պատճառներ կան:

Հակված ենք մտածելու, թե այդ պատճառները կարող են լինել հետևյալները՝ ա. Կիլիկյան Աթոռը մերժում է եկեղե-

ցական կանոնադրություն ունենալու գաղափարը, որովհետև խուսափում է մեր Եկեղեցու նվիրապետական կառույցը բանաձևելուց, որի գլուխն է հանդիսանում Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսական Աթոռը, Կիլիկյան Աթոռի գաղափարը լինելով միայն իր Աթոռի գլուխը, կաթողիկոսական իրավասություններով իր օրինական թեմերի մեջ:

Նշենք այստեղ, որ հիմնականում նման պատճառով է, որ անցյալ դարում, նույն Կիլիկյան Աթոռը մերժել էր ճանաչում տալ և ընդունել Կ. Պոլսի «Ազգային Սահմանադրություն»-ը:

բ. Կիլիկյան Աթոռը դեմ է, որ մեր Եկեղեցին օժտվի մի կանոնադրությամբ, որովհետև ուզում է խուսափել իր Աթոռի կանոնական և աշխարհագրական իրավասությանց սահմանների ճշտումից:

գ. Կիլիկյան Աթոռի ղեկավարությունը փորձում է կառչել «Ազգային Սահմանադրության» մի քանի հոդվածներին, որպեսզի եկեղեցական կյանքի ղեկավարման մեջ հաստատի աշխարհական դասի գերիշխանությունը, սահմանափակելով հոգևոր դասի կանոնական իշխանությունը և գրեթե ամբողջապես խափանելու նրա ձայնի ու խոսքի իրավունքը: Մեր կարծիքով, նման դրությունն ոչ միայն հակառակ է եկեղեցական կանոններին ու ավանդությանց, այլ նաև հակաժողովրդավարական է: Այդ, հակաժողովրդավարական է՝ եկեղեցուց ներս հոգևորականների և աշխարհականների համար ճշտել իրավասությանց ոչ հավասար պայմաններ:

«Ազգային Սահմանադրության» ջատագովները կղերապետությունը մերժելու պատրվակով, փաստորեն ձգտում են Եկեղեցուց ներս հաստատել որոշ աշխարհականների դասի տիրապետություն:

Եվ դեռ ավելին, նրանք նույնիսկ ծխում են եպիսկոպոսների իրավունքն ու պարտականությունը, իրենց Հայրապետի հետ ժողով գումարելու և խորհրդակցելու Եկե-

ղեցուն ու կրոնական կյանքին վերաբերող հարցերի շուրջ:

5. Ահա, մեր կարծիքով, այն թաքուն պատճառները, որով որոշ կուսակցական պաշտոնաթերթեր, ոգի ի բոհն պաշտպան են կանգնում «Ազգային Սահմանադրության»:

Որովհետև այլապես, ով որ տարրական չափով իսկ հասկացողություն ունի եկեղեցական իրավունքի մասին, անհնար է, որ մեր օրերին ընդունելի և կիրառելի նկատի պատմության գիրկն անցած մի օրենսգիրք, ինչպիսին է «Ազգային Սահմանադրություն»-ը, որը իրավապես և իրողապես ոչ մի այժմեություն չի ներկայացնում ոչ մեր մայր երկրում և ոչ էլ հայ Սփյուռքում:

6. Իսկ եթե ասողներ լինեն, թե որոշ այդ թերթերի աղմուկը սանձազերծված է հանուն Հայ Եկեղեցու ժողովրդավարական և ժողովական կառավարման սկզբունքների, ապա այդ սկզբունքները շատ վաղուց հաստատված ու գործադրված են ամեն տեղ մեր Մայր Եկեղեցու ծոցում՝ թեմական և համայնքային կյանքի մակարդակի վրա, հոգևորականների ու աշխարհական հավատացյալների համատեղ գործակցությամբ, առանց նրանց միջև՝ իրավասությանց և ձայնի իրավունքի սահմանափակումների:

7. Այնուամենայնիվ, ըստ երևույթին, կան խմբագիրներ, որոնք անտեղյակ լինելով եկեղեցական իրավունքից, Հայ Եկեղեցու կանոններից և պատմական փորձառություններից, Եկեղեցու հետ կապ չունեցող նպատակներով պարզապես աղմկում են, աչքները փակած մեր Եկեղեցու իրապես այժմեական հարցերի առաջ, կարծեք ապրելիս լինեն անցյալ դարի վերջերին Կ. Պոլսում, «ազգ» հասկացությունը ըմբռնելով իբրև 19-րդ դարյան վերացական գաղափար, զուրկ այժմեությունից:

Եկեղեցական կանոնադրության գաղափարի դեմ սանձազերծված արշավը պարզապես մի աղմուկ է՝ վասն ոչնչի:

